

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՆ

ԿԱԶՄԱԽՈՐՈՒՄԸ

Ընթացիկ տարին կը մշէ Դանիէլ Վարուժանի ծննդեան 100ամեակը: Հայրենիքէն Սփիւռք՝ հայ ժողովուրդը կը քանայ իր մեծարանքի լաւագոյն խորքէն ընծայել մեծ Բանաստեղծին, յորեկեան հրատարակութիւններով, ուսումնասիրութիւններով, գրական-գեղարուեստական հանդէսներով: Այսպիսի մշակի հանդէս մը տեղի ունեցած է 25 Ապրիլ 1984, Զորեքշաքի Երեկոյ, Հալէպի Հ. Բ. Ը. Միութեան սրահին մէջ, հովանաւորութեամբ Երեք հայ կրօնական Համայնքայեցեան, մալաթիութեամբ Հալէպի Միութեան Վարժարանին եւ կազմակերպութեամբ Համագգային Մշակութային եւ կրթական Ընկերակցութեան: Օրուան գլխաւոր բանախօսը եղած է Վենետիկէն այս առթիւ յատկապէս հրաւիրուած՝ «Բազմալեզու» խմբագրապետ Հ. Լեւոն Զէֆին: Ստորեւ այդ բանախօսութիւնը, որու պատմելը, առանց քննական ծանօթագրութիւններուն, արդէն լոյս տեսած է սփիւռքի զանազան թերթերուն մէջ:

ԽՄԲ.

«Բանաստեղծները իրենց ատեղծարարութեան մէջ կ'առաջնորդուին ոչ թէ սկիզբներէն, այլ տեսակ մը բնարդէ եւ աստուածային ներշնչումէ, ինչպէս Նիւտոնը ու մարդարէները»¹, կ'ըսէր դարեւրո իմաստութեան պատգամը Պրատին: Իսկ մարդկային քաղաքակրթութեան աստղակամարին միւս ծայրի հորիզոններէն՝ հնդիկ

1. ΠΑΤΩΝ, Ἀπολογία Σοκράτους, 25, c: (φύσει τινὶ καὶ ἐνθουσιάζοντες). ՊԼԱՏՈՆ, Պաշտպանութիւն Սոկրատայ, Թրդ. Հ. Ա. ՍՈՒՔՐԵԱՆ, Վենետիկ, 1777, էջ 44-45. «Մանեայ արդ եւ յաղազս քերթողացն ախուրիկ սակաւ, զի ոչ իմաստութեամբ քերթէին՝ զոր ինչ քերթեցին, այլ նրբութեամբ ոմամբ արտաքոյ զգայութեան լինելով, որպէս զիւթքն ան տեսողքն տեսլեանն»:

Ռաժասեքարա հետեւեալ ձեւով կը սահմանէր ներշնչումը. «Ներշնչումը, կ'ըսէր այն քանն է՝ որ կը շողացնէ հողին մէջ բառերու զանգուածը, տաղարիւրներու կարաւանը, քերթողական զարդերու հիւսքը, արտայայտչական ընթացակարգերը եւ այլ նման բաներ»²:

Եթէ այս է ներշնչումը, եւ այդ՝ աստուածային, ուրեմն այնքան աւելի պիտի մխրճի բանաստեղծութիւնը Աստուածայինի ոլորտներուն մէջ, որքան աւելի հզօր լըլայ քերթուածին ներդրութիւնը, փոխանցելու համար զայն ընկալող հողին՝ իրականութեան հետ այն ներքնապէս, անմիջական, անտարադիւ հաղորդակցութիւնը, ինչպէս է նոյնինքն զայն արթող ներշնչումը: Ու այս վերափոխումը տեղի կ'ունենայ ամէն անգամ՝ երբ թրթռայ մեր հողին իրաւ, մեծ, հանճարեղ բանաստեղծութեան մը յորդերով:

Դանիէլ Վարուժան, որու ծննդեան հարիւրամեայ յորեկեանը տօնախմբելու եւ այդ ծննդեան լուսապսակ խորհուրդին մեր յաւիըտասիրուած հողներուն համարժեք տրոջմելու համար հաւաքուած ենք այսօր, կը պատկանի այն իրաւ բանաստեղծներու հողին, որոնց անունին ըմբռնող կոթողութեան են ոսկեաւոր քանդակով՝ Մեծ ու - պիտի չվարանէի աւելցնել - Հանճարեղ մարդիկները:

Մեծութիւն մը, որ այլեւս ճանչցուած, վաւերացուած, կնքուած է լըլայ՝ մեր աղբյուրին տրտաւարութեան բոլոր այլադան եւ այլուրի հոսանքներէն՝ Օշականէն Ճանաչեան, Հայաստանէն Սփիւռք, լըլայ՝ բոլոր այն օտար գրադասներէն՝ որոնք ունեցած են պատեհութիւնը չիտելու Վարուժանի գործին հետ՝ Ու զարմանալի ջիւղի հանճարի

2. RAJASEKHARA, Kavyamimamsa, մէջբերուած՝ L'Art Poétique, par J. CHARPIER et P. SEGHERS, Paris 1956, էջ 50:

3. «Ջարտուղող» ձայներ մը լսուեցան ճիշտ Վարուժանի հարիւրամեակին առթիւ: Զուլալ Գաղանճեան՝ «Յառաջ. Միտք եւ Արուեստ» ամսագրին մէջ (Թիւ 82, 1 Ապրիլ 1984) երեւան եկած յօդուածով մը՝ Վարուժանը նկատելով հանդերձ մեր քաղաքակրթութեան լաւագոյն ներկայացուցիչներէն, զմեծադոյնք մեր օրերու գրադէաններէն, կը պնդէ, սակայն, թէ Վարուժան՝ բանաստեղծութեան Քաղկացուցիչ բոլոր տարբերուն դոմարն է... քացի կարեւորագոյնէն՝ զոր բանաստեղծութեան մէջ բանաստեղծականը կը կոչեմք. այն՝ որ քերթուածը պիտի բռնէ. պահէ: Արդէն քանի մը տող առաջ հեղինակը հաստատե՛ր էր. «Հացին արդ»՝ կարգադէս անոյ միւս առաջինէն է որ կը վերջիւնէ, դուրսէն անոյ առաջին թեղիւրէն՝ զոր բնականաբար, միտքորար կը պահանջէ. Մեծարեցի (զուր ըմբռնէ՝ նաեւ ցեղին) շունչը, որ Վարուժանի վարձր գրականութեան էին մը բանաստեղծութիւն գերէ: ... Վերցուցի՞ք թեղաբանը... մեծաւ քերթուածը (ընդդէմէնքը մեղմէ՝ Հ. Լ. Զ.): Նման դասաստան մը, զոր ոչ միայն չենք կրնար իւրացնել, այլ նոյնիսկ իր մեկնած տեսանկիւնէն իսկ դիտելով՝ ծայրայեղ կը նկատենք, կ'ենթադրէ բնականաբար բանաստեղծութեան ուրոյն ըմբռնում մը, որ անցողաբար քաղաքայտուած ալ է յօդուածի ընթացին, որուն համաձայն Քաղաքայտեղծականէն էութիւնը կը կայանայ ճշմարիտ, անձնականութեան, ենթակայականութեան հաստատումին մէջ: Գորշեղով փր

Թուրքը բանաստեղծութեան մը մէջ՝ ուր խտացած, անձնաւորութեան, կենսագործութեան է երեքհարարամեայ մշակութիւնը ժողովուրդի մը ոգին, Վահագնի թոցադէս ծնունդէն մինչեւ Հացեկացի Մարգարէն, Աւարայրի զարմեթէն մինչեւ Անիի զմբէթները, Նարեկի ողբերգութեան մինչեւ Կիրիկեան փառքերը, մինչեւ Քուչակ եւ Հալիճոր, մինչեւ Վենետիկ ու Տէր Զօր:

* * *

Ծնած՝ Բրգնիկ, մօտիկը պատմական Փոքր Հայքի աւազ տառաններէն Սեբաստիոյ, 20 Ապրիլ 1884ին, հոն աճած է Վարուժանի մանկավարժը «ուռնիններու տիւրը հովանիններուն տակ երազկոտ, կամ դետեղեղներուն վրայ բաղերուն քարեր նետելով անառակօրէն»⁴, ինչպէս ինքն իսկ կ'ըսէր Թէոդիկի ուղղութեամբ իր նամակին մէջ:

Արիտի ջուրերէն աւել ծծած հայրենի այդ բնավայրը, եթէ խորապէս ակօսած է Վարուժանի ներշնչումի հունքը՝ մինչեւ իր անաւարտ գլուխ դործոց Հացին Երգը, կարելի է ըսել թէ բանաստեղծին անհետ կորած հէք աճիւններուն՝ որոնք խորան մ'ունին բովանդակ Հայրավթեան սրտին մէջ, այդ բնավայրը կ'ընծայէ նաեւ գրեթէ թանձրացող շիրիմ մը՝ ուր երազած եմ թէ կը հանդէպ եւ Վարուժանի իր համեմատ դեղակիցներուն միջեւ, ամէն անգամ երբ, աչքերս տեսնուուն դէպի արեւելք՝ Ալիաի անտես արիերը, Հոգեհանգստեան պաշ-

բանաճեղատի գաղաթնակէտին հասած այս տեսութիւնը, որուն հետեւողական մնալով՝ Քրոջ բանաստեղծութեան կալուածէն դուրս վտարած էր նոյնինքն Տանդէի «պատմական» մասերը, ինչպէս ինք կ'որակէր, ոչ միայն մեծ մասամբ զերգանցուած է այսօր, պահելով հանդերձ իր վաւեր փոփոխութեան արժանեղանութիւնը, այլ կը բախի նաեւ տեսարանական լուրջ դժուարութիւններու, քանի որ կը հիմնուի ուղղակի գաղափարապաշտ իմաստասիրութեան, մանաւանդ անոր ենթակայական ուղղութեան վրայ:

Աւելցնենք՝ թէ քաղձալի պիտի ըլլար, որ հեղինակը իր գրադատական միտքերը, նաեւ իր ժխտական տեսութիւնները տուեալ բանաստեղծի կամ գործի մը նկատմամբ, արտայայտէր գոռալ ձեւերով՝ քան աչք զոր կը գտնենք, օրինակի համար, հետեւեալ բացատրութիւններուն մէջ. «Անլուրի Զանգակատան» մը միօրինակ, ձանձրացնող զօրանքը կամ Կիկոյի մը աթանկաբարդ բառախաղերը, «Հայաստանի մէջ Զարեհի եւ Սփիւռքի մէջ Թէքեանի անհամար, անթիւ աղբահաւքներուն մասին» եւն: Զենք կարծեմ թէ նման արտայայտութիւններ նպաստեն մեր գրադատութեան կամ բանաստեղծութեան զարգացման, եթէ ընդհակառակն արեւի չպղտորեն միտքերը՝ հրահրելով անձնական կամ հաւաքական կիրքեր:

4. Առ Թէոդիկ, Կանտէն, 1 Նոյ. 1908. ԴԵՐԵՆԻԿ ՃԻՋՄԷՃԵԱՆ, Դամիէլ Վարուժան. Դպրոցական կեանքը, ամսիպ մամուլները, գրականութիւնը (այսուհետեւ՝ Դամիէլ Վարուժան), տպ. «Յուսարեք», Գահիրէ, 1955, էջ 108: Նոյնը՝ ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ, Նամակներ (այսուհետեւ՝ Նամակներ), Երեւան 1965, էջ 157:

տուն մը մատուցած եմ՝ Շիրիլի գերեզմանատան մէկ անկիւնը դռնուց Բրգնիկցիներու յատուկ թաղին մէջ:

Բրգնիկի հետ՝ ուրիշ երկու բնավայրեր եւս պիտի դրոշմեն Վարուժանի երեւակայութեան մէջ իրենց գոյներն ու դիտերը: Անոնցմէ առաջինը եղած է Պոլիս՝ իր չնաչաւահիկ բնութեամբ, ուր իր ժամանէ Վարուժան, երկրորդականամեայ, 1896ի մոայլ օրերուն, եւ ուր կը յաճախէ նախ Մարգարէի Միսիթարեան նախակրթարանը: Ապա կ'անցնի Քաղկեդոնի, այսինքն Քաղկեդոն կամ Քատրէօյի Միսիթարեան երկրորդական վարժարանը, ուր քաղաքը պիտի ունենայ հանդիպելու իր ստղանդը կանխատեսող պաշտելի գաղափարակին՝ Հ. Միսիթարեան Քաղկեդոնի, եւ ուր, իր քաղաքով, «երկար տեսն պատանեկութիւնս երազած է ընդմէջ Մօսկայի ծովակին եւ Դուբնայի ոսկրներուն» Սկիւտար»⁵:

Երրորդ բնավայրը, որ հզօր ներգործութիւն մը ունեցած է Վարուժանի երեւակայութեան վրայ՝ Վենետիկն է: «Ամբողջովին կը գրամ, կը գրէր Վարուժան, թէ Վենետիկ աղբած է իմ վրաս իր գոյներու, տոռերներու եւ լոյսերու յարափոփոխ գանձերով: Քաղաք մը, ուր առանց պատկերի մտածել կարելի չէ»⁶:

Բայց Վենետիկի աղբեցութիւնը Վարուժանի վրայ չէ հղած լոկ «բնավայր»ի մը՝ այլ միեւնոյն ատեն նաեւ «միջավայր»ի մը աղբեցութիւնը: Ինքն իսկ Վարուժան կը հաստատէ ասիկա՝ խոր վրէժ. «Երկու միջավայր աղբած են վրաս. Վենետիկը իր Թիցիանոյով եւ Փլամպորը իր Վան-Տիգրերով: Առջինին գոյները եւ վերջինին բարբարոս իրապաշտութիւնը յօրինած են վրձին»՝ գոր անախառնութիւնն ունիմ թաթխած լոկալու մի միայն հայրենի որդան կարմիրին մէջ եւ ծովածովի արեւները⁷: Այս տոգերով Վարուժան կուռ, քայց համապարփակ արտայայտութիւն մը կու տայ իր բանաստեղծութեան բնոյթին, մէկ կողմէ՝ անոր լայն հունին մէջ հասող արտաքին բաղմամբիւ անուցիչ թեւերով, միւս կողմէ՝ անոր խորապէս հայկական ենթախորքով: Եւ այս գոյք ստարերուն Վարուժանի մէջ համեմալ, ներդաշն, գրեթէ կատարելութեան յանդող ձուլումն ալ անայայտ մէկ նշանը չէ՞ միթէ անոր բանաստեղծութեան աղբային եւ համամարդկային կրկնակ տարածքին: Արդարեւ, հարկ ջկայ յիշեցնել՝ թէ ամէն մեծ բանաստեղծութիւն կը բնորոշուի միանգամայն այս գոյք յատկանիշերով. ըսուած է. «Ո՛չ ոք աւելի անգլիացի է քան Շէքսպիր»:

5. Դամիէլ Վարուժան, անդ: Նամակներ, էջ 157-158:

6. Վ. ԱՆՈՐՈՆԵԱՆ, Դ. Վարուժանի իմֆանկեմագրութիւնը, «Հայրենիք», Դ (1926), Թիւ 3, էջ 47: Նամակներ, էջ 206: Պոլիսէն Վարդէս Ահարոնեանի ուղղութեամբ՝ 26 Մարտ 1914 թուակիր նամակէն:

7. Առ Թէոդիկ, նշ. նամակ. Դամիէլ Վարուժան, էջ 100: Նամակներ, էջ 158:

փեր, բայց ո՛չ ոք աւելի մարդկային է քան Շէյքսպիր. ո՛չ ոք աւելի ֆրանսացի է քան Ռասին, բայց ո՛չ ոք աւելի մարդկային է քան Ռասին»:

Վենետիկի դերը Վարուժանի ձեւաւորման մէջ չի սպառնում, սակայն, աղբանդակներէ քաղաքին բնական ու պեղարուեստական բացառիկ հրապոյրներով ու ճոխութեամբ: Սակայն ամփոփ, բայց եւ ոչ նուազ եզակի միջավայր մը, այն՝ զոր պիտի ահիւնէի Կոչել արիւնջանեան աստուծամբ մը Հայ-Վենետիկ, ստանձնած է դուցէ ամէնէն վճռական դերերէն մէկը՝ Վարուժանի մէջ արուեստագէտին ու քերթողին ձեւաւորման ուղղութեամբ: Այս կէտը կարօտ է զուգէ որոշ յատկումի մը, քանի որ ինքն իսկ Վարուժան ունի ոչ միշտ նոյնատիպ արտայայտութիւններ իր վարժարանին եւ առհասարակ Վենետիկի Միսիթարեան միջնակարգին նկատմամբ: Շատ հատուկ է թրււին, օրինակի համար, փոքր հետեւեալ խօսքերը. «Միսիթարեանները սխառեմատիկ ազդեցութիւն չեն ներդրած հոգիիս վրայ»⁸: Մանաւանդ թէ չեն պակսիր իր նամակներուն մէջ մերթ ու մերթ ժողովրդական երգեր Միսիթարեաններու նկատմամբ: Երկրորդ, որ կը բացատրուին՝ յանազան վանականներու հետ անձնական լուրջ հարաբերութեամբ, որոնց մասին հոս տեղը չէ անշուշտ անդրադառնալու: Բայց, թէ ո՛րքան կենսապէս իր ուրիշներէն ներքնապէս ծաղրերուն մէջ կը կրէր Վարուժան Միսիթարի շունչը՝ իր համար թէ բաւական բերեցաւ արտայայտութիւն մը կը դրոշմէ, երբ խնդրոյ առարկայ չեն կամ ազդեցութիւններ չեն գրգռներ՝ իրեն համար ստաւակալի անձեր կամ հարցեր, ինչպէս օրինակ հետեւեալ խօսքերուն մէջ. «Եւ իմ ճամբորդի ցուպիս ծայրով քեզ կը բերեմ, ողջոյնը Միսիթարի տերունդին, եւ կը ծորեմ օրհնութիւնը Հիւրմիւղներու, Բագրատունիներու եւ դաշնակաւոր Ալիշանին, եւ ըզնիս՝ հպարտ կը ըզնիս զինք հպարտութեամբ Միսիթարեան խոնարհին, եւ համարձայն վը հողիդ լուսաղանդ»։ Այսպէս կը գրէր Վարուժան 1911ին, Միսիթարի օրրան՝ «Հողգարի բլրակին» առջեւ⁹: Իսկ 1913, 27 Մարտ թրււակիր նամակին մէջ՝ կը գրէր Գարեգին Լեւոնեանին. «Զուգուծութեամբ կոխեցէք Հայրերուն նուիրական կողին. Ձեր ամէն մէկ քայլը կրնայ հանճարի մը անխնայ հանդիպել»¹⁰: Այս սրբապաշտներուն եւ համոզումներուն իբրեւ զաւանակաւ տարագրումը կրնանք նկատել՝ Ալիշանն ու Պէշկիթաշեանը նիւթ առնող այն քանախօսութիւնը, զոր

8. Առ Վ. Ահարոնեան, նշ. նամակ. «Հայրենիք», նշ. տեղ: Նամակամի, անդ:

9. «Հողգար», 1911, թ. 30: Նոյնը՝ Գ. ՎԱՐՈՒԺԱՆ, Երկր (այսուհետեւ՝ Երկր), Երեւան 1984, էջ 452-453:

10. Դամիէլ վարուժան, էջ 117: Նամակամի, էջ 202:

կատարած է Վարուժան 1913ի Նոյ. 9ին՝ Մուրապ - Ռափայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան սարքած հանդէսին առթիւ¹¹:

Արդարեւ, այնքան ակներեւ է Վարուժանի դրոշմին վերաբերման այս շփումը Միսիթարեան իրականութեան հետ, որ Յ. Օշական չէ վարանած հաստատել՝ թէ Վարուժանի մէջ «իւր լրումին կը յանգի Միսիթարեան ազգայնականութիւնը»¹²:

Եթէ Բրգինիկ ծնունդ տուած, Պոյիտ արթնացած, Վենետիկ ձեւած ու կերտած է Վարուժան քանախօսը, անոր հասունացման ուղիին վրայ վերջին կարեւոր հանգրուանը եղած է Կանա, Վարուժանի համալսարանական ուսումնարանը, իր մշակութային ու քանաւորական աշխարհական խմորումներու եռուն միջավայրով:

Մանկութիւնը, աղքատութիւնը, տառապանքը, արդէն վաղուց, իր առաջին իսկ դրսեւորումներէն, դրոշմեր էին Վարուժանի քնարին վրայ իրենց անշիտութիւն հետքը: Վենետիկեան շրջանին պատկանող իր անդրանիկ հատորը՝ Սարսուղները յայտնի վիպակութիւնն են ատոր: Նոյն շրջանէն է նմանապէս՝ հեղինակին կենդանութեան մեծ մասամբ անտիպ մնացած եւ այս առթիւ Երեւանեան յոբերինական հրատարակութեան մէջ լոյս տեսած Փուշի ալիսներ խորագրով տետրը¹³. Խորագիր մը՝ որ կ'երեւի արդէն Սարսուղներու «Մուսային» ձօնին մէջ:

«Երգերն անոր պիտի պատմեն Սարսուղներ
Մարմնաւորուած իմ արիւնէս, շարժումէս,
Ներշնչելով տողեր, փուշի ալիսներ,
Ուր, հորմակոծ, պիտի ծրլի սկիւռն աղեկէդ»:

Կանա ի միջնակարգ մարդկային սկիւռն, լիցուսութեան, սրբապաշտի ասպրումներուն լուրջութիւնն ու շրջապատ մը կ'ընձեռէր. այն է՝ ճարտարարուեստականացող ընկերութեան մը մէջ բանուորական դասակարգին իրամիճակը, հարցերը, եմթարկուած ճնշում

11. Բանաստեղծ Տեառ Դամիէլ վարուժանի, «Ամսօրեայ Տեղեկատու» Մ.-Ռափայէլեան Նախկին Աշակերտաց Միութեան, Ե (1913), թիւ 30, էջ 98-100: Նոյնը՝ Ալիշան եւ Պէշկիթաշեան խորագրով՝ Երկր, էջ 491-494:

12. Յ. ՕՇԱԿԱՆ, Հայ Գրականութիւն, Երեւան, 1942, էջ 494 (ընդգծումը մեզմէն - Հ. Լ. Զ.):

13. Երկր, էջ 387-423. Ծանոթագրութիւններ, էջ 540-542: Անհասանական չէ որ պատմին Վարուժանը ակզնաբար յղացած ըլլար Երեւանեան հատոր մը՝ տալով անոր իբրեւ ընդհանուր խորագիր առաջին մասին տիտղոսը, ինչպէս յետագային ըրած է նաեւ Հեքսամետր Երգերուն մէջ: Մակարն Փուշի ալիսներ տետրը, իբր մարդկայնութիւն, անտիպ մնացած է մեզի անձնօթ պատճառներով: Անկէ փնջ ինչ կտորներ միայն տպագրուած են հեղինակին կենդանութեան՝ «Բազմավէպ»ի մէջ եւ այլուր:

ներն ու կեղեքումը: Վարուժան անդրադարձօրէն կը խորացնէր այդ միջավայրին մէջ, անշուշտ նաեւ իր լայնածաւալ ընթերցումներուն օգնութեամբ, ժամանակակից «ընկերային հարց»ին գիտակցութիւնը: «Հոգիիս վրայ բոցի մը լեզուին պէս զգացած էի, պիտի գրէ յետագային, քանուորներուն աղաղակները մէկ կողմէն, ու միւս կողմէն շուայտ ու արեցող կեանքը, փ դուր թաղնուող քողացումները բարոյիկ համարուած փարթամ ընտանիքներուն»¹⁴:

Յեղիմ սիրտը յղացուած եւ գրառուած Կանտեան ուսանողական տարիներուն, նոյնիքն իր էապէս «աղգային» ներշնչումին մէջ աւելնայտօրէն երեւան կը բերէ Վարուժանի մէջ կոփուած դասակարգային գիտակցութիւնը, ինչ որ դեռ աւելի լայնածիր արտայայտութիւն մը պիտի գտնէ Հեքամոս երգերուն մէջ, ինչպէս ինքն իսկ կը հաստատէ¹⁵:

«Ժողովուրդն է, ժողովուրդն է որ կու գայ:

Ճամբաներուն, փողոցներուն մէջ Դարձին

Դեպքեր են որ թրխակոհակ կը հոսին:

Հարատահարուած ժողովուրդն է որ կու գայ:

Գործատուէն, թիարանէն, քանտերէն
Գլորի կու տան: Արիւնտ են եւ քաղցած:

Ոմանք ասկրով, ոմանք մուրճով են գինուած:

Հրապարակին մէջտեղ վրակի կը տըրուի
Կառաւարանն՝

Եւ իր մեծ բոցն երկնուոր
Ամբոխներուն գիտակցութեան կ'ըլլայ ջահ:

Ժողովուրդն է հող կըրծող:

Մինչեւ մէջքն իր՝ տիրմին մէջ
Ուրիշներու գլորեակ շինող ամբոխն է՝

Որ ոտքի միակ մոլեղնադրոյթ ուստումով
Նոյն իր խորունկ գերեզմանին քարին վրայ

Ահաւատիկ կը կանգնի»:

Կարծէք, Չարենցի մը «խեղաղարուած ամբոխներ»ն են որ կու գան: Այնքան նման են պատկերային միջոցը, ինչպէս նաեւ պատկերներու եւ գաղափարներու շարժական հիւտը: Ըսենք անցողաբար,

14. Առ Վ. Ահարոնեան, Նշ. նմ. Դամիէլ Վարուժան, էջ 27: Նամակամի, էջ 207:

15. Նշ. տեղեր:

որ քսաներորդ դարու մեր քանաստեղծութեան այս երկու գագաթներուն միջեւ, փ հեռուկա բացայայտ ու ծանրակշիւ տարբերութիւններու, մէկէ աւելի են հոգեկան ու քերթողական «համապատասխանում»ները: Ահաւատիկ տակաւին ըստ քանականի անկոխ գետին մը՝ վարուժանագիտութեան կամ չարենցագիտութեան, առ հասարակ հայ գրադատութեան ասպարէզին մէջ: Արդարեւ, Չարենցէն մինչեւ դարուս առաջին տասնամեակները Պոլիսէն Թիֆլիս երկարող մեր գրական-մշակութային երկնակամարին վրայ ունինք շարան մը արեւելահայ-արեւմտահայ գողցածին հոգիներու — ինչպէս Արտիւս — Պէշիկթաշեան, Մեծարենց-Տէրեան, Շանթ-Շիրազեան, Օշական-Չարեան, եւ աւելցնենք Վարուժան-Չարենց —, որոնք բոլորն ալ՝ իւրաքանչիւրին անկրկնելի անձնականութեամբ եւ յաճախ ընկերաքաղաքական պայմաններու, գաղափարախօսութիւններու եւ քերթողական ըմբռնումներու զգալի տարբերութիւններով հանդերձ՝ կ'արտայայտեն հայ հոգիին որոշ հասարակաց միտումները, յորդորը, տեղիները պատմական տուեալ ժամանակաշրջանի մը մէջ, իմացական ծիսածան մը կամընկելով մեր ժողովուրդին երկու մեծ գանգաւածներուն միջեւ:

* * *

Արդէն ակնարկեցի Վարուժանի ստեղծագործութեան որակին եւ գտած ճանաչումին: Փորձենք հիմա աւելի մօտէն դիտել ինչ մը այդ ուրոյն մեծութեան բաղկարար տարրերը:

Սկսելով Վարուժանի գործին ամէնէն ակնառու կողմերէն, իսկոյն պիտի նշմարենք հոն հայ լեզուի արտակարգօրէն ճոխ, գեղեցիկ ու վաւեր արտայայտութիւն մը, որ բառին բուն իմաստով լեզուական կոթող մը կը կարգէ: Հայերէնի լատինագրեան հոլովութիւն ընթացքին, նկատելով զայն իր արմատական միութեանը մէջ՝ գրաբար կամ գոյգ աշխարհաբար գրաւորումներով, Վարուժան կը գրասէ գենիթային գիրը մը՝ Նզնիկի, Նարեկացիի, Բագրատունիի, Չարդարեանի, Ահարոնեանի եւ Չարենցի կողմէն: Թաւ եթէ ուղենք նկատի առնել մասնաւորապէս արեւմտահայերէնը, կատարած չկայ թէ Վարուժանի լեզուն խորհրդանշիչ կը դառնայ արեւմտահայերէնի ատեղծագործական արտայայտչականութեան, իր ամէնէն բիւրեղացած տարագով, ինչպէս եղած է ճակատագրի բոլոր անհիշադարձային գրողներուն: Բաւ է մտաբերենք Տանդէն կամ Պոսիւէն:

Կը խորհիմ թէ լեզուական կատարելութեան, գեղեցիկի ճաշակի, հաւասարակշռութեան զգացումի այս մարդին մէջն է, համահայկական հանրապարհակ աղբայնականութեան մը ուժգին դրոշմին հետ,

432-84

ուր ամենն աւելի կը պարզուի Վարուժանի ստուգաբան Մխիթարեան միջակայքին: Ու դարձանարիօրէն փոխադարձաբար պայմանաւորուած են իրարմէ՝ «Համադրեաց» ողբին ներշնչուած դարափարայնութեան հաւասարակշռութիւնը եւ յայն արուեստագիտական հաւասարակշռութիւնը՝ որ էստրէա կը քննարկէր Բաղդատունիի մը լեզուն եւ ոճը: Այնպէս որ Օշական, յետ հաստատուելով՝ թէ Վարուժանով իր լրուամիտ կը յանդէր Մխիթարեան ազգայնականութիւնը, անցնելով քերթողական արտայայտութեան մակարդակին, կը յաւելուր. «Մեր յեղափոխական պայքարը կը դառնէ նոյնքան զօրաւոր ու աւելի հաւասարակշռու երգիչ մը, որքան չէ՝ կրօնած լլլալ աշխարհիւթերուն բոլորանուէր ապաստարկու Սիամանթօն»¹⁶, ինչ որ պէտք չէ, կը կարծեմ, որ եւ թերազնահատում ներփակէ Սիամանթօնի սերօթին հանդէպ:

Ինչ տը լախ Վարուժանի լեզունին նկատմամբ՝ արդէն լեզունը արեւ կու առայ, թէ աշխարհի լեզունն սոսկ զեղազիւտական ճաշակի մը արտայայտութիւնն լլլալէ անդին եւ անկէ առաջ՝ արտայայտութիւնն է բանաստեղծական հակայն առաջնորդի մը: Շարունակելով մեր վերլուծումը՝ աշխարհայնորէն առաւել շօշափելի յատկանիշերէն դէպի աւերակ ներքին քաղաքացիները, մեր ուշադրութիւնը պիտի գրաւուի Վարուժանի քերթողական փորձառութեան աշխարհն եւ աշխարհը երեւանակներէն:

Վարուժանի գրական նախաքայլերուն մէջ եւ անկէ ալ ետք՝ անաշխարհի ներկայութիւնն մէջ ռումանթիկ դարձողը: Հ. Սիմոն Երեմեանի վերլուծութեամբ, Վարուժանի «նախամեծար հեղինակներն էին եւ կը մնային Ծէքսպիլը, Լամարտինը, Վիկտոր Հիւկոն, Ռասինը եւ Շատոբրիանը, մեր աղբարին հեղինակներէն ամենէն աւելի կը կարդար Հ. Արսէն Բաղդատունին, Հ. Ալիշանը, Բաֆֆին ու Արտիսանը: Ասոնց համար ան ունէր զերազոյն հիացում եւ ինծի կ'ըսէր. — կը շարունակէ Երեմեան — թէ աշխարհի հեղինակները ամենէն աւելի ուժգնօրէն աղբար են իր վրայ»¹⁷: Ուրեմն՝ մեծ մասամբ ռումանթիկ հետինակներ, թէ եւ ասոնց աղբարութիւնը պէտք է լմանալ, կը խորհիմ, սուսանալաբար բանաստեղծական խորքի, իմացական թուիչքի, արուեստի կատարելութեան, հայրենասիրական զգացումի նկատմամբ՝ քան

16. Թ. ՕՇԱԿԱՆ, անդ:

17. Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ, Դամիել Վարուժան, «Հայրենիք», 1927, թիւ 5, էջ 52: Զօպանեան նշմարած է Սարսուռնիւն մէջ Դուրեանական «խնամութիւն» մը, որու զգալի ուժգնօրէն բողբոջած է Վարուժան (տես՝ Երկեր, էջ 508-510. Նամակ առ Ռ. Պաղարեան, Կանտէն, 1906 Նոյ.—Դեկտ.): Անշուշտ, լիովին իրաւացի է Վարուժանի երբ կը շնորհակալ տարբերութիւնը իր եւ Դուրեանի բանաստեղծութեան միջեւ. ասիկա արդեւ չէ, սակայն, որ ինչ ինչ պատկերներ կամ մեծացումներ բանաստեղծին ենթադրականութեան մէջ տպաւորուած լլլալ գուրեմանական ընթերցումներէ՝ մանաւանդ սկզբնական հանդիմաններուն:

թէ բուն ռումանթիկ արտայայտութեան ուղղութեամբ: Արդարեւ, ռումանթիկ զգայնութիւնն ու շեշտը արիւտի շունենան Վարուժանի լրատեղծագործութեան մէջ տիրող հանդամանք, քայքայ եւ անպէս կը յայտնաբերեն ներկայութիւնն մը աշխարհը ընդհանուր տարածքին վրայ՝ մինչեւ քերթողին ամենահատուն արտադրութիւնները: Ներկայութիւնն մը, որ յատկապէս զգալի կ'ըլլայ, թէ եւ միշտ միախառնուած վարուժանեան գրական աշխարհ փորձառութիւններուն եւ անոնցմով փոխարինուած, Գոգոթայի ծաղիկներ շարքին ինչ ինչ փոքրերուն մէջ — ինչպէս՝ «Տրտուեմ», «Սեղանած միջատը», «Մեռած», «Պատգամաւորներ», «Լքում», «Միտա է յոգնած» —, եւ որ մեղմօրէն կը հպանցէ նաեւ Հացիմ Երգին ընդմէջէն:

Վարուժանի քերթողական խօսողութեան ձեւաւորման վրայ բուն իմաստով ազդող առաջին գրական հոսանքը պէտք է նկատուի Եւրոպայի պառնասեան կամ նոր-դարական շարժումը, մանաւանդ իր խոսքական գիծով:

Հ. Սիմոն Երեմեանի վերլուծելիս խօսքերէն յայտնի է՝ արդէն Վարուժանի ընթերցումներու ծիրին եւ մտաւոր դարձացման ընդարձակութիւնը, որ կը հաստատուի նաեւ իր խաղ անձնական վերլուծութեամբ. «Կարգադրէր էի հեղինակներէն մինչեւ Հոմերոս եւ Հոմերոսէն մինչեւ Մետերլինկ»¹⁸: Չեմ կարծեմ թէ անաշխարհ լլլալը՝ թէ ըսեմք որ Վարուժան մեր մտաւորականներուն միջեւ կը հանդիսանայ առաջիններէն մին՝ որ ունեցած են գրական-մշակութային ամենամոխ պաշար: Իր հետաքրքրութիւնները կ'ընդլայնէին ոչ միայն գրականութիւնը, այլ մարդուն վերաբերեալ գիտելիքներու քաղաքական աստեղնաշարը, մանաւանդ ինչ կը վերաբերէր արուեստի ընդհանուրին¹⁹:

Վերադառնալով նոր-դարականներու հետ իր ընտելութեան՝ սատողերը, զոր պարծ է իր մտեմադոյն Դերենիկ Ճիգմէճեանին՝ Ճողովէ Գարուշէի մահուան առթիւ, կը յայտնեն բաւական պերճախօս կերպով, թէ իր փարուժ հանդուցեալ բանաստեղծի արուեստին՝ կը գերադանցէր սոսկ գրական-գեղարուեստական հիացումի մը սահմանները, զառնալով համար՝ բառին լրու խաղ առումով՝ պաշտոնաւ. «Մոտեմ» Խոսքի խորին վրայ՝ Գարուշէի յիշատակը համարուէ. իր նոր դարադին վրայ աշխարհի աստղերը եթէ արցունք կաթեն, յոսանք իմ աչքս պիտի լլլայ: Այդ տեղի քամիները լեռներուն մէջ եթէ զինքը ողբերգեն, իմ տեղս վեհալը պիտի երգէ»²⁰:

18. Ա. Վ. Ահարոնեան, Նշ. նմ., Նշ. էջեր: Տես նաեւ՝ Նամակ առ Ռ. Պաղարեան, Կանտէն, 22 Մայիս 1907. Դամիել Վարուժան, էջ 79-80: Նամակամի, էջ 105-106:

19. Ա. Դերենիկ Ճիգմէճեան, Կանտէն, 22 Նոյ. 1907, 6 Յունիս. 1908, 3 Մարտ 1908. Դամիել Վարուժան, էջ 87-89, 93: Նամակամի, էջ 121-122, 128-129, 132-133:

20. Ա. Դ. Ճիգմէճեան, Կանտէն, 27 Փետր. 1907. Դամիել Վարուժան, էջ 74: Նամակամի, էջ 98:

Ժամանակը չի ներեր իջնելու ախտեղ բնագրային, ոճային, ձևական, արտայայտչական մասնակի հանգիստություններու մէջ: Նըշենք միայն, շատ ընդհանուր կերպով, խորագրային գուգահեռ՝ զոր կը գծեն՝ վարուժանեան Հեքամոս երգերը քարտուղեան Բարբարոս երգերուն հետ (Odi barbare): Անցնելով, այլապէս, ներշնչումի նիւթին եւ այդ նիւթին մերձեցումի մակարդակին, կարելի է մատնանշել երկու բանաստեղծներուն միջեւ հետեւեալ հասարակաց գիծերը: Հին Հռոմի պաշտամունքը Քարտուղի մօտ եւ վարուժանի պաշտամունքը՝ հայրենի անցեալ փառքերուն եւ աւանդութիւններուն: Երկուքին ալ յաճախակի վերաբերումը հեթանոս զիցարանութեան եւ հեթանոսական՝ մերթ քիչ ծանօթ՝ անուններու — օրինակ՝ Լարգէ: Քարտուղիի մօտ գովերգը խառնական միութեան հերոսներուն, Դանիէլի մօտ՝ գովերգը հայ մարտիկներու եւ յատկապէս անհատ տիւալներու, ինչպէս Եփրեմ կամ Ժողովրդական կերպարը Եփրեմ Տօնէի: Բնականաբար, այս բոլորը՝ իբր բնանիւթ՝ չէին ներկայանալ անհրաժեշտօրէն նոր-գասական խմացում մը: Մանաւանդ թէ, մեծ մասամբ, կրնային շատ լաւ իբր ներշնչումի արդիւր ծառայել ուժմանիկ զգայնութիւններու: Նոր-գասականութեան կնիքը, որ կը խնամեցնէ Քարտուղին ու վարուժանը, այդ բնանիւթերուն մերձեցման եւ մշակումի ձեւին մէջն է. ոչ այնքան իբր անցեալի յուշեր կամ արագայի տեսիլներ՝ որոնք թախծօրէն վը գգուեն մեր հոգին հեռաւոր կարօտներու արծարծումով, եւ կամ իբր քաղձանք, կոչ, հրաւեր, որքան իբր վերյառնող կամ կատարող կամ տուեալ իրականութիւններ՝ եթէ նոյնիսկ յարթանակին քով պիտի կերպագրուի նաեւ վիշտին բիրտ իրականութիւնը: Յատկանշական է այս տեսակէտէն «Եփրեմ»-ի վերջին տունը.

«Զո՛ւր է, Եփրե՛մ. — Մինչ ազատ Ժողովուրդները արդէն
Պըղընձախիւսն արձանիդ Արշալոյսով կը շաղուեն,
Հո՛ն, շիրմիդ վրայ, հերարձակ Մայր մը կայ միշտ ցաւադին
Լըքուած՝ Վիշտին մէջ կըրկին»:

Վարուժան մօտէն ծանօթ էր նաեւ Ֆրանսական պառնասեան դպրոցին²¹: Քարտուղեան Բարբարոս երգերուն համապատասխան ունինք Լըքոնթ Տը Լիլի մօտ գարձեալ Poèmes barbares շարքը, վանխուած՝ Poèmes antiques-էն: Կարելի է մատնանշել բնանիւթային աւելի մասնակի նմանութիւններ ալ, օրինակ՝ ընդմէջ վարուժանեան «Վանատուր»ին եւ Լըքոնթ Տը Լիլի «Յիւսհեծ Հերակլէս» (Heraklès au taureau) քերթուածին: Նմանապէս նշելի են գուգահեռները

21. Տե՛ս Եփրեմ, էջ 476-477:

Ֆրանսաւա Քուիէի բանաստեղծական երգերուն եւ վարուժանի նմանահունչ էջերուն միջեւ:

Իրմանիկիւմէն շնչաւոր փոխ առնող, նոր-գասական ձգտումներով շարախուող վարուժանեան արուեստը, ձեւակերպութիւն իր քարդ ու բարձրագիւյր յառաջընթացին մէջ, պիտի խմորուի առկաւին ուրիշ հիմնական հանդիպումներու ալ տպաւորութիւններով: Խորհրդապաշտութիւնը, թէեւ վարուժանէն նկատուած իբր «տարրակի ափինք-սին» մօտեցում մը²², պիտի ներգործէ իր վրայ քիչ թէ շատ ինչպէս ուժմանիկիւմը՝ առանց տիրող հանգամանք տատանում. ներկայութիւն մը՝ զգալի յատկապէս դարձեալ Գողգոթայի ծաղիկներուն մէջ, օրինակ՝ «Լոյսը» եւ այլ կարգ մը քերթուածներ:

Ընդհակառակն, աւելի սերտօրէն պիտի հաղորդակցի վարուժան խորհրդապաշտներու կրտսեր անունդին հետ, յանձին յատկապէս պերճաւոր իմիջ վերհանի: Այս վերջինիս ժամանակակից լեզուներէն ու կերպարանափոխող քաղաքները նկարագրող իրապաշտ հակումները պիտի պտնեն վարուժանի մէջ աշխարհի արձագանգ մը՝ որ քերթողական իրապաշտութիւնը միջադպրային ճափանիշով աննախընթաց կատարի մը պիտի հասցնէ: Եւ ճիշտ այս կէտին մէջ կը կայանայ, մեր համեստ կարծիքով, ամէնէն նշելի ներդրումը՝ զոր վարուժանի տաղանդը կատարած է միջադպրային բանաստեղծութեան անդատանին մէջ: Չեմ կարծեր թէ ճափաղանցութիւն լրջայ Երբեք, եթէ լսենք որ արեւմտեան արդի բանաստեղծութիւնը — որու մաս կը կազմէ նաեւ մերը — բնաւ չէր ստրած վարուժանէն առաջ այնքան կերպարակալ, այնքան գալարուն, այնքան «բիրտ» իրապաշտութիւն մը, ընդելուզուած միաժամանակ՝ գաղափարի եւ զգացումի քաղաքական ճոխ ու թարմ հիւսկէնով մը, որպիսին վը տեսնենք վարուժանի լաւագոյն կտորներուն մէջ, ուր արուեստը տեղիք չի տար հոնտորութեան կամ գիտարուեստի, ու քերթուածը կը դառնայ իրաւ բանաստեղծութիւն:

Չեմ ուզեր աւելի կանգ առնել վարուժանի քերթողական կապակցութիւններուն վրայ, ինչպէս, օրինակ, հիացման ուրիշ բեւեռ մը կազմող Կապրիէի Տ'Աննունցիոյ²³ կամ Ատա Նեկրիի եւ կամ

22. Հմմտ. Անդ, էջ 477-478: Խորհրդապաշտութեան նկատմամբ վարուժանի խօսելակերպը որոշ համակրանք կը թելադրէ. անշուշտ կապուած այն համոզումին՝ թէ «խորհրդապաշտութիւնն իր արտայայտութիւնը վ'անէ ուղղակի նիւթէն» (Անդ, էջ 478): Գործնականին մէջ, սակայն, վարուժանի քերթողական գրելակերպը, ըստ փառականին, «վերապահ» կը մնայ բուն խորհրդապաշտութեան նկատմամբ:

23. Տե՛ս Դանիէլ Վարուժան, էջ 44 («Դառնկերս՝ վարուժան»), 91 (նամակ առ Դ. ձեռնագրան, Կանտէն, 11 Փետր. 1908): Նամակամի, էջ 132:

հայաժողովին Վիկտորիա Արամյանի հետ. քանի որ ժամանակը կը լրանար եւ հարկ է որ քիչ մը եւս բացայայտենք Վարուժանի մեծությունը և գաղտնիքները:

Լիկվեցողական գրասենյակներին տրամադրված լինելով թէ հիմնական չափանիշներին մէջը բանաստեղծական մեծությունն ամբողջովն կը պարզուրաւ, առանձին հասանքի ամբողջ հոգեւոր դերակատարութեան կարողականութեամբ: Դժուար է, ուրեմն, կարճել թէ ինչ պատճառներով վրայ կը գետնադուր Վարուժանի նման բանաստեղծ մը, որ կը ձուլէ, կը բարեխառնէ, կը վերափոխէ, իր քերթողական փորձառութեան մէջ, ամբողջ գարուն մը ասլոյնովն ընդհանրապէս զոհաբերելով իր անհատական իրաւունքներին, կանգնած՝ երկու դարերու տարածական շրջանում կամ իր իրաւունքներով զանոնք՝ իրենց արժանաւոր եւ սկիզբ, իրենց լրում եւ ռազմավար²⁴: Այսպէս, Վարուժան իր ուրույն եւ արժանի տեղը կը գրաւէ դարավերջի ու դարասկիզբի ոչ միայն հայկական, այլ եւ եւրոպական քերթողութեան մեծագոյն անուններու վերջին:

Վարուժանի բանաստեղծութիւնը եթէ կ'ընդգրկէ արտաքին հոսանքներու եւ ուղղութիւններու լայնածիր աղեղ մը, նուազ ճախ չէ իր բնականութեան, մշակած սեռերուն եւ արտայայտչական ձեւերուն:

24. Ուշագրաւ են Վարուժանի հետեւեալ տողերը, ուղղուած Լևոն Խաճանեանին, ուր քաղցրէ կերպով կը պարզուի իր ըմբռնումը «գաղտնիքներու նկատմամբ գեղեցիկին գերանցականութեան, եւ մանաւանդ «Իրապաշտութեան» իր ընկալումը՝ իրենց գեղեցիկին հասնելու ամէնէն ուղիղ ճամբան, որ իր մէջ կը ներփակէ գեղեցիկին այլեւայլ մերձեցումները: Վարուժան կը գրէ. «Ըստ իս գեղեցիկը դպրոց չունի. գեղեցիկութիւնը քաղմանկիւն հաստատակող մըն է... Եթէ գեղեցիկը արտայայտելու տարբեր ձեւերուն մէջ կը կայանան գեղարուեստական գաղտնիքը, եւ վարձեմ թէ քերթութեան եւ հոգեւոր գեղեցիկութիւնները մէկ կերպով ճշգրտօրէն կ'արտայայտուին — գաղտնի փնտրելու արժեքը: Իրապաշտ գտնէ կոչէ գիտ. կ'ընդունիմ. բայց իրապաշտութիւնը գեղեցիկութեան հասնելու ամէնէն ուղիղ գիծն է: Իրապաշտութեան մէջ պէտք է փնտրել բոլոր միւս գաղտնիքները՝ որոնք իր ստորաբաժանումներն են լուր. քերթութիւնը իր խորհրդաւորութիւնները ունի, իր անսահման մրրկները ունի, կամ իր միջօրէի արեւուն միակտուր խաղաղութիւնը. ասոնք փոխ ի փոխ նկարելով ինչպէս որ են, ինչպէս որ մեր հոգիին վրայ փոխ ի փոխ կը ցոլան, մենք փոխ ի փոխ կ'ըլլանք խորհրդապաշտ, ընդամենի, դասական. հետեւաբար գեղեցիկութիւնը անթերի արտադրելու համար եւ պիտի սիրէի տալ այս քողորդ միանգամայն, բնութիւնը ինչ որ է եւ ինչպէս որ է, մէկ քերթութեամբ, մէկ տունի, նոյնիսկ մէկ տողի մէջ» (Դանիէլ Վարուժան, էջ 119: Նամակներ, էջ 117: Առաջին հրատարակութիւնը 1910 թուականին Սփառէն գրեւոր կը համարի այս նամակը, մինչ երկրորդ հրատարակութիւնը զայն կը գետնադէ 1909ին, Կանտէն: Ընդգծումը մեզմէ՝ Հ. Լ. Զ.): Ամբողջ քերթողական մը բովանդակող այս տողերուն մէջ՝ բերուած վերջին բառերով, Վարուժան, կարծես, կ'աւետէ արդէն բանաստեղծական խմբում մը, որ մեկնակէտը պիտի կազմէ Ունկարթթիի մը «գոտութեան» եւ «էականութեան» ձգտումին:

ալ արդարեւութեամբ: Արդարեւինն սիրալինին, հոգեբանականին հովանաբանին, լեզուաբանին միատրիքին, քարերգական եղբերգականին, Վարուժան փորձած է ու տիրապէս նուաճած՝ մարդկային իրականութեան այլեւայլ երեսները, բանաստեղծութեան մէջ արդէն քաղաքացիութիւն գտած կամ հաղիւ գտնելիք գրեթէ բոլոր անուններն ու ձեւերը, ինչ որ, ապակայն, ամենակարեւորն է՝ ներարկելով հպած լարին նոր շունչ, նոր աւել, նոր կեանք, տեղեկելով՝ մէկ խօսքով՝ քերթողական նոր լեզու, նոր լատիներէի մը:

Արդէն Սարգստեանի մէջ, գրեթէ քանամեայ, Վարուժան կը հասնի դերադրի բարձունքներու: «Յաւերժութեան անմիջ» քերթութեամբ, որու յղացման փուլերը ինքը Վարուժան մանրամասնօրէն կը նկարագրէ Տոքթ. Պապարճեանի զբաղմունքով մէկ նամակին մէջ²⁵, է եւ կը մնայ բոլոր ժամանակներու լաւագոյն արտադրութիւններու կողքին դասուելիք կտոր մը: Քիչ անգամներ քերթողական լեզուն յաջողած է թափանցել այնքան շեշտակիօրէն իրականութեան արտին մէջ՝ որքան, օրինակ, սա հետեւեալ տողերով.

«Խոնարհեցայ, եւ կարծես ինձ հետ բոլոր
Բնութիւնը հոն խոնարհեցաւ, ահաւոր
Ըստեղծութիւն մէջ ծննդադիր.
Եւ միայնաւ իրերուն տիրող սրբալիս՝
Խիզախօրէն ընկղմելու համար գիտ
Խորհուրդին մէջ տեսարիք»,

եւ կամ՝

«Լաւ. վերաբէ՛ղ կը թաւարիմ քարն անդին,
Ըստիսակ էջ, որու միւս կողմն է գլորուած
Անպատճառ բան մը Մահին.
Անոր ներքեւ գաղտնիք մ'անշուշտ կը չընչէ,
Սի՞րտ թէ հոգի՞. — օ՛հ, լսէ ինձ թէ ի՞նչ է.
— Երկու կարիճ, ալ ոչ փն: —»:

Կ'ըսուի թէ Վարուժան նպատակ ունեցած ըլլար հին ազգային կեանքին առնուած լիպսագնեղութիւն մը տալու. «Հարճը» թերեւս նախափորձ մ'ըլլար այդ ուղղութեամբ, եւ առանց նշանակութեան չէ գուցէ որ, իր աղբորի օրերուն, Պոլիսէն Հոմերոս ուղած էր²⁶:

25. Տե՛ս Երկեր, էջ 515-516. նամակ առ Ռ. Պապարճեան, Կանտէն, 1906 Նոյն-Դեկտ.:

26. Թ. Վ. ՍԻՐՈՒՆԻ, Դանիէլ Վարուժան, Հրատ. «Արագ», Պուրէշ, 1940, էջ 159: Տե՛ս նաեւ՝ Ա. ՇԱՐՈՒՐԻԱՆ, Վաւերական վկայութիւններու լոյսին տակ Դանիէլ Վարուժանի վերջին ամիսներու ամբողջական պատմութիւնը, «Կանչ», 22 Յունիս. 1984, էջ 6:

Եթէ Վարուժան չհասաւ տարու դասական առումով դիւցազներգակ դործ մը, պիտի համարձակիմ, սակայն, ըսել՝ թէ դիւցազներգութիւն մ'է իր ամբողջ քերթողական գործը՝ Սարսուռներէն մինչեւ Հացիմ երգը։ Երգը՝ հայութեան վիշտին եւ արիւնին, հայրենի փառքերուն եւ կարօտին, հայ գիւղին եւ հողին։ Փառերգը՝ սուրէ՛ եւ հուրէ՛ անցնող, մեռնող եւ վերջառնող մեր ժողովուրդին։

Լսեցինք Պղատունի խօսքը, որ մարգարէներ կը նկատէր բանաստեղծները։ Այդպէս կը պատգամէր ժողովուրդներու հին խմատութիւնը։ Մարգարէ է Վարուժան՝ եւ իր բանաստեղծութեամբ, եւ իր նահատակութեամբ։ Միայն երեւութապէս անաւարտ մնացած է իր երգը, ինչպէս երեւութապէս միայն անաւարտ է հայ ժողովուրդի կեանքին ամենահարազատ երգը՝ դիւցազնավէպը Սասունցի Դաւիթի։ Այդ երգին լրումն է Մհերի քարայրը, ուսկից կ'արձագանգէ սերունդներու արտին մէջ յոյսի եւ ազատութեան եւ անմահութեան կանչը։ Եւ ի դուր չէ որ Վարուժանի մեղի հասնող վերջին խօսքերն ալ՝ հայրենի գիւղին առատութեան եւ բերկրանքին, ոսկիին եւ լոյսին յոյսով կը թրթռան։

«Մինչեւ լեցուին չարան չարան
Պարկերն ու վե՛ր կանդնին նորէն,
Եւ սայլերն ալ ճրռողներէն
Ոսկին թողած՝ լոյսով դառնան»։

Այո՛, լոյսով եւ ճոռողներով պիտի դառնան հայրենի գիւղին սայլերը, եւ այդ լոյսն է՝ անմահութեան դրաւականը Յեղին՝ որու Սիրտը երգեց Վարուժան։

Հ. ԼԵՒՈՆ ԶԵՔԻՅԱՆ

Résumé

DANIEL VARUŽAN POÈTE ET ARTISTE LE CARACTÈRE DE SA POÉSIE ET LA FORMATION DE SON ART

(A l'occasion du centenaire de sa naissance)

P. LEVON ZEKIYAN

Daniël Varužan est considéré comme l'un des plus grands poètes de la littérature arménienne moderne. Des publications jubilaires, des études critiques et des manifestations culturelles et académiques commémorent partout, en Arménie Soviétique et dans la diaspora arménienne, le centième anniversaire de sa naissance qui est célébré cette année. Une pareille manifestation eut lieu aussi à Alep, le 25 Avril 1984, avec la participation comme conférencier principal du Père Levon Zekian, Directeur de «Bazmavep». Le texte de cette conférence, publié déjà dans la presse arménienne, est reproduit ici, enrichi de notes critiques.

Après un bref aperçu biographique où sont mises en évidence les influences des différents milieux dans la formation de Varužan dans lesquels il reçut son instruction scolaire et universitaire – voir Constantinople, Venise, Gand –, l'A. donne une analyse succincte, mais rigoureuse, de la culture littéraire du poète, de ses contacts avec les courants artistiques et poétiques de l'époque, de ses propres conceptions de l'art et de la poésie. Varužan y apparaît comme un poète doué d'une expérience personnelle très riche et très variée des tendances artistiques ainsi que des problèmes sociaux de son époque, du Parnasse au Symbolisme et à la question ouvrière, et pourvu d'une telle verve créatrice, qu'il réussit à dépasser, en les fondant dans sa personnalité puissante et originale, les limites et les frontières des «écoles» et des courants.

La poésie européenne – dont fait partie la poésie arménienne – connaît avec Varužan, peut-être pour la première fois à un tel degré, des accents d'un réalisme plastique, tordu et «cru», imprégnés quand même d'une fraîcheur de sentiments et de délicatesses toutes particulières.